ԱՐՑԱԽ

1. ՎԸԵՍԿԵ ԽԸՆՁՈՐԸ

Ինում ա, չինում մին թաքավեր։ Էտ թաքավերին ինում ա իրեք տըղա, իրեքըն էլ մինը մինան ղաշանգյ, մինը մինան ղոչչաղ, ամմա պուճուր տըղան լոխճան ղոչչաղըն ա ինում, համ էլ լոխճան խելունքը։

Ըտրանց ինում ա մին գյուլլու բաղ։ Բաղ, հի՞նչ բա՞ղ, վըեր աշխարքիս ամմեն ջուռա պըտուղ ըտրա մաչին կար, աշխարքիս ամմեն ջուռա ծաղիկնին ըտրեղ փըսնում ար, վըեսը տամ չորս ղոլին։ Նախշուն-նախշուն, ռանգյ-ռանգյ ծրտերը ծլվըլում ին, ուրանց քախծը ծենավը մարթի սըերտ փառավրե՛ըրմ։

Ամմա էտ գյուլլու բաղին մաչին լոխճան կյեղեցիկը, լոխճան ղաշանգյը մին վըեսկե խընձորի ծառ ար։ Մին թըմա՞շա, մին պատիժ պըեն, մին արմա՞նք... Էտ խընձորին ծառը վըեր ծաղկըմ չա՞ր, ուրան պես կյարմուր նան սըպտըկռանգյ ծաղիկներավը վըեսը աշխարքըս օնըմ ար... Մարթ ասըմ ար օտիմ վըեչ, խըմիմ վըեչ, էտ խընձորին ծաղկին վըեսը քաշիմ... Ամմա դե հի՞նչ կանիս, վըեր էտ խընձորնին հըսնըմ ար մըէծ-մըէծ, ղաշանգյ, պըծրպաձին տալիս, ինքն էլ վըեսկե, խնձորներավ լըցնըմ, քըշերը կյամ ին, կյուղանըմ, էլ թողըմ չին, թա տարը մինն էլ ա, տըեսնա։ Վըեչ թա մինակ թաքավերը, լհա՝ էն խըեղճ բաղվանչին, վըեր պահալ ա, մըծրցրալ, մինը տըեսնա։ Իտի ամմեն տարի կյամ ին, կյուղանըմ։

Վերջը մին օր թաքավերը կանչըմ ա տըղորցը ուրան կոչտը, ասըմ. — Ա՛ խոխերք, ա՛ ասլանի ճըտեր բալեքյ, ախեր իստի-

պրեն չի ինիլ, վրեր ամմեն տարի կյան մրեր բաղին վրեսկե խրնձորը քաղին, տանին։ Ցրեկեքլ մին թահր անինք, մին պրեն անինք, էլ թողինք վրեչ, վրեր կյան կյուղանան։

Մրեծ տրղան ասրմ ա. — Ա՛ հաբ, մունք էլ ընք մաթալ մրնացալ, մրեր անրմին հետի էլ չի լալ, թող էս քրշեր յրես քյինիմ ղարավուլ կենամ, տրեսնամ, էտ հո՞ւ վա կյամ մրեր վրեսկե խրնձորը տանրմ։

Էն մին ղոլան միշնակ տրղան ասրմ ա. — Հազրը յրես կքյինիմ իլի՞։

Պուճուրրն էլ թա. — Չէ, յրես կրքյինիմ, խե՞, յրես ծրղանա պակա՞ս ը՞մ։

Թաքավերն ասրմ ա. — Թող ծրեր մրեծ ախպերը քյինի՞, տուք կացեք։

Մրեծ ախպերը ուրան զենքը-ղրահը կապրմ ա, ուրուգյունատեմ քյրնրմ բաղրմը էտ վրսկե խրնձորին տակին ղարավուլ քաշրմ, վրեր կյողին փրոնի, մրեչան էրկու անի՞։ Քրշերը ամառնան քրշեր ա ինում, երգինքը ասթխերավ լի՞քյը, ծրլծրլը՞մ, սարերան հով ա կյամ ծառերը ըրորրմ, ասիս լհա՞ ասրմ ըն. «Քո՞ն իլ, ա՛ տրղա, քո՞ն իլ»։ Ամմա թաքավերին մրեծ տրղան քոն չի ինում։ Անց ա կրենրմ մին խիլլա՞ վախտ, վախտը վեշ մին պրենի եշրմ չի, անց ա կրենրմ, տրեռնրմ ա քրշերվա կեսը։ Քրշերվա կեսանը տրենը թաքավերին մրեծ տրղին քոնը տանրմ ա։ Հիշքան օգրմ ա քոն չինի, էլհա ամա՞լ չի կյամ, տա քրնավ ա ընցնրմ։

Ուռութանա եր ա կրենրմ, տրեսնրմ վրեսկե խրնձորան մին խիլլա՞ քաղած, տարած։

Հրմրնչիլավ, իրեսը սրեվ, քյրնրմ ա հորը կոշտը, ասրմ. —Ա՛ հաբ, պա ասել չը՞ս, քրշերվա կեսին քրնավ ըմ ընցալ, եկալ ըն խրնձորը քաղալ, տարալ։

Հաբը կրզնրվրմ ա, ասրմ. — Դե, քյինա աշկաս հեռու, քյրզանա պրեն չի տուս կյալ, լհա՞ մրեծ-մրեծ խոսրմ ըս, քյրեղ թաբիփ անրմ, անրմրտ կա, ըմանրմրտ չիկա՞...

Էն մին քրշերը միշնակ տրղին ա ղարկրմ, վրեր վրեսկե խրնձորին ղարավուլ քաշի։

Միշնակ տրղան ուրան զենքերը յոր ա օնրմ, քյրնրմ։ Քրշերը ղով, ծառերը ըրորվրմ, ասթխերը թա մրեծ, թա պուճուր լոխ տուս եկած, վարթերին վրեսը ընդեղերք ընգած, բուլբուլը յրերքրմ... էտ տրղան միչև քրշերին կեսը կանանչ խուտերրմը թեքյ ընգած երգյինքին ա եշրմ, ամմա կես քրշերանը հետը քոնը տանրմ

ա, հիշքան օղըմ ա, թա քոն չինի, կարըմ չի, աչկերը ինքյը-ինքյը հոփ ա կյա՞մ...

Ուռուբթանա վըեր եր ա կըենըմ, տըեսնըմ ա էլհա եկած, մին խիլլա՛ խընձոր քաղած։

Տա մըտածըմ ա, թա հո՞ւնց քյինի ուրա՛ն հորը իրեսին եչի, համուբ ա, մին էլ ճարը կըտրած քյընըմ ա, հորըն ասըմ. — Ա՛ հա՛ր, դե ինձ հինչ օղըմ ըս ըրա, հինչ պատիժ օղըմ ըս տո, կես քըշերին քոնըս տարալ ա, կըրեցալ չըմ ինձ պահիմ, դե կընեբիս։

Հա՛րը կըղնըվըմ ա, ասըմ. — Տու նան քու մըեծ ախպերըտ լհա՛ մին ըք, ճոխտըտ էլ թունի հարա՞յ ըք, դե համոթ ծըեզ հետի, դե տու վէլ աչկաս կորի... Մըղափուն էն հաց, վըեր տուք ըք կըեբա՞լ...

էն մին գոնըմըն էլ Թաքավերին պուճուր տըղան ա քյընըմ ղարավուլ քաշըմ, էլհա ուրա՛ն զենքը-զրահը եր կալած։ Քյնըմ ա թուշ, էտ ծառին քըշտի մին քոլի տակի խե՞ լա՛վ կանանչ խոտ կար, ընդեղ պըրանվըմ։ Քըշեր, հի՞նչ քըշե՞ր, ասթխերը կըթկաթըմ օքըստոսի քըշեր՞, երդյինքյը ծիր-կաթին կյոտեն կապած, լուսընդյա՛ն սարին քըմական տուս կյալիս, հունցու մին թա՛զա՛ հարս, գյարդա՛կին քըմական տուս կյալիս, ուրա՛ն լուսին տակին ծառերին տերեներին փըլըստըրատին տալիս, մոք-փուրուզա՛ քըշե՞ր, հովը մին զըլան ա քոն պըերըմ, ծաղիկներին վըետը՝ մին ղըլան։

Կես քըշերը վըեր անց ա կենըմ, Թաքավերին պուճուր տըղին քոնը տանըմ ա։ Հիշքան անըմ ա վըեր քոն չինի, էլհա քոնը տանըմ ա։ Տա տենակը շուքան հանըմ ա, մաննը կըտրըմ, յրան աղ ածըմ, վըեր հըեռան քոնը տանե վըեչ։ Մին էլ ա տըեսնըմ, վըեր մինը թըմփթըմփալավ, զըմփզըմփալավ, դըղըրդալավ, մըրթմըրթալավ էս ա կյամ ա։ Նշըմ ա տըեսնըմ մին մըեծ, օխտը կըլխանե դո՛վ ա, կյամ ա, թա վըեսկե խընձո՛րնին կյուղանա։

Էտ տըղան եր ա թըռչըմ տըեղան, թորավը թըխըմ, չորս կըլո՛խը կըտրըմ, մընըմ ա իրեք կըլո՛խը։ Էտ դո՛վը փախչըմ ա, քյընըմ։

Թաքավերին պուճուր տըղան վախըմ չի, ըտրա հըետան քյընըմ ա, մին գյա՛հ հետքը կուրցունում ա, ամմա մին էլ ճարըմ ա, ա՛ռնին կըթկաթած տըեղերավը քյընըմ ա, տըեսնըմ, էտ դո՛վը նի մըտավ մին խոր վըերը։ Թաքավերին տըղան ետ ա տըեռնըմ ո՛ւրա՛նց բաղը, վըեսկե խընձո՛րնին հըվաքըմ, պերըմ ո՛ւրա՛նց պալատը։

Թաքավերը տըեսնըմ ա, ուրխանըմ, տըղին իրեսան պաչըմ, ասըմ. — Շատ ապրիս, բալաս, թա իմ թախտըս ավադ անիս, տու լըս ընելու, մընացածը մին կապեկ չա՛ժին։

Էքյսը ըխպըրքյ-ախպերքյ հըվաքվըմ ըն, վըեր քյինին դո̈վին ըսպանին։ Ընդրանք ո̈ւրա̈նց նըհետ պաշար, զենք-զըրահ, քյա̈նդիր, տես-տեն ըն յոր օնըմ, քյըլնըմ։

Էլհա ճընապարին վըեղին յրան ա̈ռնին կաթերին եշիլավ քյըլնըմ ըն, քյըլնըմ, հըսնըմ էտ խոր վերին։

Մըեծ ախպերն ասըմ ա. — Առաչ ինձ կախ տվիք։

Մըեծ ախպորը մըեշկան քյա̈նդիր ըն կապըմ, կախ տամ։ Հա̈-լա̈ վըերին կեսին հըսած վըեչ, տա ճըղճըղոց ա տամ, թա. — Էր-վեցի՛, էրվեցի՛, տո̈ւս պըերիք, տո̈ւս պըերի՛ք։

Ախպերքը տո̈ւս ըն պըերըմ։

Ընդրանա ետը միջնա̈կ ախպորը մըեշկան ըն կապըմ, վըերին մըեչան կախ տամ։ Հա̈լա̈ վըերին կեսը հըսած վըեչ, բըղբըղոց ա տամ. — Վա՜յ, հարա՜յ, էրվեցի՛, էրվեցի՛, տո̈ւս պըերիք, շուտ ըրի՛ք, վա՜յ էրվեցի՛։

Ախպերքը տո̈ւս ըն պըերըմ։ Նորաթը կյամ ա պուճուր ախպորը։ Պուճուր ախպերը ասըմ ա. — Հիշքան յըես ասիմ՝ էրվեցի՛, էր-վեցի՛, ինձ տո̈ւս չօնիքյ։

Պըերըմ ըն քյա̈նդիրը ընտրա մըեշկան պենդ կապըմ, կախ տամ։ Հա̈լա̈ վըերին կեսին չըհըսած, տա ծեն ա տամ. — Վա՜յ ըրվեցի՛, ըրվեցի՛, հըննեցիք ինձ, ըրվեցի՛, վա՜յ։

Ամմա ախպերքը հանըմ չըն, քըշըցնըմ ըն մինչև վերին տակը։

Թաքավերին պուճուր տըղան տըեսնըմ ա ո̈ւրա̈ն տիմացը մին տոռնը։ Էտ տոռնը պըենըմ ա, նի մըննըմ, տըեսնըմ էտ օթախին վըեսկե թախտին մին կյեղեցիկ ախճիգյ նըստած, ընդրա ծո̈ւյնին էլ դո̈վը կըլո̈խը տիրած քօն ա իլա̈։ Ըտրանց կոխկին էլ մին արծա-թի ըստոլ, ըտրա յրան էլ մին վըեսկե ղա̈փա̈զըմ մին զա̈ռ բըլբո̈ւլ։

Էտ ախճիգյը վըեր տըեսնըմ ա թաքավերին պուճուր տըղին, ասըմ ա. — Ա՛յ դա̈շա̈նգյ տըղա, պա տու մեխկը չը՞ս, վըեր յըեկալ ըս ըստըեղ, շուտ ըրա ետ տըեռ, թա չէ դո̈վը քընուտըեղա եր կը կենա, քյըլեղ կուլ տա։

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա. — Ցըես դևան վախըմ չըմ, եր կըցըրու, թող կյա նհետս կըռըեվ անի։

Ախճիգյը տըեսնըմ ա, վըեր էտ տըղան վախող ունշուվար չի, ճարը կըտրած՝ գո̈վին եր ա կըցընըմ։

Դո̈վը օզըմ ա, թա էտ տըղին կուլ տա՜, ամմա էտ տըղան թո-րավը մին հենց թըխըմ ա, վըեր էտ դո̈վին էն մընացած իրեք կը-լո̈խը մին դո̈նըմ ա կըտրըմ։ Ըտրանա ետը թաքավերին պուճուր տըղան նի յա մըննըմ էտ օթախին մըեչավը պեցվող մին օրիշ օթախ,

տըեսնըմ վըեսկե Թախտին յրա մին ընգրանա էլ իվիլ կյեղեցիկ ախճիգյ ա նըստած, էնքան կյեղեցիկ, վըեր արևին ասըմ ա. «Տու տո՛ւս մի կյալ, յըես ըմ տո՛ւս կյալուա»։ Ըտրա ծընգնին ո՛ւրա՜ն կըլո՛խը տըրած՝ քոն ա իլա՜լ մին գո՛վ, վըեր եկողին սըերտը կըճաքի, էնքան անճոռնի ար, ինքըն էլ քառասուն կըլխանի։

Էտ ախճիգյը վըեր տըեսնըմ ա Թաքավերին պուճուր տըղին, ասըմ ա.—Ա՛յ, խըեղճ տըղա, էտ հո՞ւնց ըստըեղ ընգիր, շո՛ւտ ըրա փախի, Թա՜ չէ գո՛վը եր կըկենա, քյեզ կուլ տա։

Թաքավերին պուճուր տրղան ասըմ ա. — Ցըես ըտրանա վախողը չըմ, եր կըցըրու, ո՛ւրո՛ւր նըհետ կըռըեվ անինքյ։

Ախճիգյը ճարը կըտրած եր ա կըցընըմ։ Ըսկըսըմ ըն ո՛ւրո՛ւր նըհետ կըռըեվ անելը, ըտրանց կըռվան երգյիրը տո՛ւրո՛ւր ա կյամ, երգյինքը Թողի Թըլպերավ ծասկվըմ։ Ախըր-վըերչը Թաքավերին տըղան ո՛ւրա՜ն Թորավը էն քառասուն կըլո՛խն էլ կըտրըըմ ա, գո՜վին եր քըցըմ։ Ախճիգյը ուրխանըմ ա, վըեր ո՛ւրա՜ն ազադից էտ գո՜վին ճա՜նգյա՜ն։

Հա՜մին էտ օԹախին մըեչավը մին օրիշ օԹախ էլ ա պըենվըմ։ Թաքավերին տըղան նի յա մըննըմ էտ օԹախը, տըեսնըմ, էլհա վըեսկե Թախտին նըստալ ա մին օրիշ ախճիգյ, վըեր ըտրա քըշտին էն էրկուճը մին ղող, էնքան կյեղեցիկ, սիպտա՜կ ճըրա՜քյ, արեի լո՛ւս, աշխարքիս օխտը կյեղեցկոԹունը։

Ընդրա քըշտին տիրած վըեսկե ըստոլին յրան, մին վըեսկե ղա՜փա՜ղըմ ղա՜ռ բո՛ւլբո՛ւլը յըերք ա ասըմ։ Քըռասունըիրեք կըլխանե մին գո՛վ, ծըեռքը շա՜նին տակավը տիրած՝ էտ ըխճըկանը ծընգնին քոն ա իլա՜լ։

Ախճիգյը վըեր էտ տըղին տըեսնըմ ա, ասըմ ա. — Ա՛յ ջա՜հիլ տըղա, պա տու մըեխկը չը՞՞ս, վըեր քու վըեննավըտ, քու ծըեռքավըտ, յըեկալ ըս էս գո՜վին կոշտը, վըեր քյըեզ կուլ տա։ Շու՛տ ըրա, փախի՛, քյինի՛։

Թաքավերին տըղան ասըմ ա.—Ցըես գո՜վան վախողը չըմ, գո՛ւրԹնըցուրու, վըեր նըհետը կըռըեվ անիմ։

Ախճիգյը տըեսնըմ ա վըեր ճար չիկա, ասըմ ա. — Ա՛յ ղոչաղ տըղա, դե վըեր իտի յա, մըետըտ պահի, վըեր գո՜վին կըլխընին կըտրիս, ինքյը ասի. «Մին էլ Թըխի», էլ Թըխիս վեչ, Թա չէ գո՜վը ըըղանալու յա, քյըեզ կուլ տա։

Ասըմ ա պըըծընըմ, գո՜վին եր կըցընըմ։ Կըռըեվ անիլը ըսկըսըմ ըն։

Ընտրանց կըռվան աշխարքըս դղըրդըմ ա, երգյինքը ըըոտըմ։

Թաքավերին տըղան մին-մին գո՜վին կըլխնին կտրում ա, վերջի կլո՜խն էլ վըեր կըտրըմ ա, գո՜վը եր ա ընգնըմ, համ էլ ասըմ.— Մին է՛լ Թըխի, մին է՛լ Թըխի։

Թաքավերին պուճուր տըղան ասըմ ա.— Ցըես իմ մոր փորան մին հըետ ըմ ծընվալ, էլ Թըխիլ չըմ։

Գո՜վը ըստակըմ ա։ Թաքավերին տըղան ձոնոտ Թոըը սըրփըմ ա, տընըմ ուրա՜ն տըեղը, կյամ նստըմ էտ ըխճըկանը կօխկին։ Ախճիգյը ուրխոթուձյան խըտտըմ ա ընդրան, վըեր ուրա՜ն ազատալ ա գո՜վին ճա՜նգյերա՜ն։

Ըտրանա ետը էտ ախճիգյը նան Թաքավերին տըղան, քյըընըմ ըն էն մընացած օթախնին, էտ դեերի վըեսկե-արծաթը, հարըստոթուձը լոխ յոր օնըմ, վըեսկե խըընձո՜րնեն էլ յոր օնըմ, ետ տըեոնըմ, կյամ էտ էրկու ըխճըկանը կօշտը, ընդըանց էլ յոր օնըմ, ընգըանց ստոլին զա՜ռ բուլբո՜ւլնին էլ յոր օնըմ ուրա՜նց վըեսկե ղա՜փա՜զա՜վը, ընգնըմ քուձշըըպոճախ, լոխ հըվաքըմ, կյամ էտ վըերին մըեչը։

Թաքավերին տըղան ախպորցը կանչըմ ա, վըեր քյա՜նգիըը կախ տանի։ Կախ ըն տամ։ Առաչ հանըմ ըն էն առաչի օթախին կյեղեցիկ ըխճըկանը, ուրա՜ն զա՜ռ բուլբուլա՜վը, ուրա՜ն օթախին հարըստոթուձավը, ետավ հանըմ ըն էրկուձշի օթախին ըխճըկանը, ուրա՜ն զա՜ռ բուլբուլա՜վը, ուրա՜ն հարըստոթուձավը։ Նօքաթը կյամ ա իրեքինշի օթախին ըխճըկանը։

Ախճիգյն ասըմ ա.— Առաչ տու տուս եկ, ետավ յըես։

— Չէ՛, առաչ տո՛ւ տուս եկ, ետավ յըես։

— Ախեր յըես գյուդըմ ըմ, վըեր քու ախպերք քյըեզ տուս չըն օնելու, քյըեզ նախանձվելու յըն, մընալու յըս էս վըերըմը։ Դե վըեր իտի յա, էս ա ըստըեղ մին տոռնը կա, պեց կանիս, կտըեսնաս ընդեղ էրկու վըեչխար ուրուր նըհետ կըռըեվ ըն անըմ, ուրուր ղոչի յըն տամ։ Շուտ կանիս նըստիս սիպտա՜կ վեչխարին յըըան, վըեր սըեվ վեչխարին յըըան նըստեցիր, քյըեզ սըեվ աշխարքըն ա տանելու, ամմա վըեր սիպտա՜կ վըեչխարին յըըան նստեցիր, քյըեզ լուս աշխարքըն ա տանելու։

Էտ լուսի պատառ ախճիգյը ուրա՜ն մաննան մատնին հանըմ ա, տամ էս տըղին, ասըմ.— Ինք առ էս մըտանին, վըեր նըեղ տըեղ ընգնիս, քյըեզ քյո՜մա՜գյ կանի։

Ասըմ ա, պըըծընըմ, Թաքավերին պուճուր տըղան քյա՜նգիըը ըտրա մըեշկան կապըմ ա, եր հանըմ, ետավ էլ ըտրա զա՜ռ բուլբուլը, վըեսկե ղա՜փա՜զըմ տիրա՜ծ, յըետավ էլ ուրա՜ն օթախին վըեսկեն, բըռըլյանդը, իլա՜ծ-չիլա՜ծը լոխ եր հանըմ, ինքյը մընըմ վըե-

ըլմը, ըսպասըմ, վըեր էս ա ախպերքը քյա̈նգիրը կախ կըտան, վըեր ինքն էլ տու̈ս կյա։ Ամմա ախպերքը քյա̈նգիրը կախ չըն տամ, ու̈րու̈ր նրհետ խոսկ ըն կապըմ, վըեր պուճուր ախպորը վըերըմը թողին, էտքան վըեսկեն, էտքան հարըստութու̈նը, էտ իրեք ախճիգյը յոր օ̈նին, տանին պալատը, ու̈րա̈նց հորը ասին, վըեր ու̈րա̈նք ըն գո̈վին ըսպանալ, ու̈րա̈նք ըն էտքան հարըստութու̈նը, էտ ըխճըկերքը, զա̈ռ բու̈լբու̈լը, լոխ հինչու կա, ու̈րա̈նք ըն պերալ, պուճուր ախպորըն էլ գո̈վը կոլ ա տըվալ։ Իտի էլ անըմ ըն։

Ըտրանց թողինք ու̈րա̈նց ճընապան քյինին, տըեղ հըսնին, կյանք Թաքավերին պուճուր տըղան խոսինք։

Էտ տըղան վըեր տըեսնըմ ա, ախպերքը ու̈րա̈ն թողալ ըն, ետ ա տըեսնըմ վըերին մաշին տես եշըմ, տեն եշըմ, տըեսնըմ մին տո̈ւնը։ Պենըմ ա տըեսնըմ երկու ղոշ էն ըն ու̈րու̈ր պըղըհարըմ, ու̈րու̈ր ղոշի տամ։ Էս տըղան հիշքան օղըմ ա սիպտա̈կ ղոշին յըրան նըստի, ա̈մա̈լ չի կյամ, սըեվ ղոշը տակըն ա տամ, էլհա հիշքան օղըմ ա սիպտա̈կ ղոշին յըրան նըստի, սըեվ ղոշը տակըն ա տամ, ըտրան տանըմ սըեվ աշխարքը, ըշտեղ օրըքըշիր միշտ էլ մըթեն ա։ Էտ տըղան շատ ա տըխըրվըմ, քյեփը կոտըըմ ա, ամմա գե, էլ հի՞նչ, ընցածը ընցալ ա. ճարը կըտրած քյընըմ ա տըեսնա մին տըեղ կըճարի՞, վըեր ընդեղ պատառ գինչանա։

Տես ա ընգնըմ, տեն ա ընգնըմ, վերշը մին պառավի տոն ա ճարըմ։ Պառավը օղըմ չար էտ տըղին ընթու̈նի, ամմա էտ տըղան ըտրան մին հափու̈ռ վըեսկե յա տամ, պառավը ընթու̈նու̈մ ա։

Թաքավերին պուճուր տըղան խե շատ ծըրավըմ ա։ Ասըմ ա.
— Ա՛յա, մին մի փառչ, յա մին գոլշա ճու̈ր տո խըմիմ, ծարավ ճիգյա̈րս էրվըմ ա։

Պառավը ասըմ ա. — Ա՛ բալա, ճու̈ր չօնինք։

Ասըմ ա. — Լհա̈ մին խըեգյ, մին ջամ ճու̈ր տո։

Ասըմ ա. — Ախեր վըեր ճու̈ր չիկա, ըշտըղա՞ տամ։

Վըեր տըեսնըմ ա, ճար չիկա, էտ պառավը գոլշին մաշին թաքու̈ն կյու̈ղու̈մ ա, պըերըմ տամ էտ տըղին։ Տըղան խըմըմ ա, տըեսնու̈մ ախեր էտ ճու̈ր չի՞։ Ասըմ ա. — Ա՛յա, էտ հի՞նչ տըվիր ինձ, ախեր էտ ճու̈ր չար։

Ասըմ ա. — Այան քյըեզ մատաղ, ըստու̈ծանա թաքու̈ն չի, քյըզանա հի՞նչ թաքու̈ն ինի, էս քաղաքըմը լոխ ճըրի կարոտ ըն։ Մին վարար ախպու̈ր օ̈նինք, էն էլ էն ա մին օխտը կըլխանի օշափ ակնը կա̈լա̈ծ, թողըմ չի ճու̈ր յոր օ̈նինք։ Ամմեն ճու̈ր յոր օ̈նելավ բիդի մին ախճիգյ քըցինք ըռեխը, վըեր թողի ճու̈ր յոր օ̈նինք։ Էտ

օշափը հաղարներով մարթ ա կոլ տրվալ, ըսօր էլ էս քաղաքին թաքավերին ըխճրկանը նորաթն ա, րիդի պըերին ըռեխը քրցին, վըեր թողի ճուր յոր օնինք։

Թաքավերին պուճուր տրղան սուարփուա ըտրղան տուա ա կյամ, քյընըմ էտ ըխպըրան մուտանըմ, տրեսնըմ էս ա լաց, սոքյ ընելավ թաքավերին պալատականին, պարեկամնին, ծառեքյը ծրուքրներին խոնչեքյ, լավ-լավ պըեներով լիքը, թաքավերին ախճիգյըն էլ եր կալած կյամ ըն։ Ժողովուրթն էլ ամեգյր մին կոժ եր կալած հրվաքվալ ըն, թա ճուր տանին։ Լհա օշափը պըերանը պեց ըրավ, թա ըճխըկանը կոլ տա, թաքավերին պուճուր տրղան կըծծակի մընան յրա յա հըսնըմ, թորավը հենց թըխըմ, վըեր օշափը էրկու կես ա ընում։

Ճուրը ըսկըսըմ ա վըրրխկալ, ամմա հալա առնի ներհետ։ Թաքավերին ախճիգյը ծրեռքը թաթախ ա անըմ օշափին առնին մաչին, թաքուն էտ տրղին մրեշկին փիչատ թըխըմ։ Ճուրը վըեր թըմրըվըմ ա, լոխ ժողովուրթը ուրանց կոժերը լըցնըմ ըն, օրախ-օրախ ճուր տանըմ։ Ժուղովուրթը շատ ա ուրխանըմ, վըեր աղաղվեց էտ օշափան, վըեր ուրանց խրխորցը էլ օշափը կոլ չի տալ, վըեր էլ ճրի նեղութուն չըն քաշիլ, վըեր ճուրը վարար կյամ ա, հիշքան օղըմ ըն յոր օնին։

Թաքավերը վըեր տրեսնըմ ա ուրան ախճիգյը սաղ սալամաթ ետ ա տրեռալ, վըեր լրսում ա օշափին ըսպանալ ըն, ճուրն էլ վարար կյամ ա, աշխարքըս ուրանն ա տրեռնըմ, էնքան ուրխանըմ ա։ Ասըմ ա. — Շուտ արիք էն տրղին քիթիք, պըերիք, տրեսնամ էտ քաշը հո՞ւ վա իլա։

Թաքավերին մեծամեծնին քյընըմ ըն տրես ման կյամ, տրեն ման կյամ, էտ տրղին ճարըմ չըն։

Ախճիգյն ասըմ ա. — Ա՛ հաբ, յրես ընգրա մրեշկին օշափին առնան իմ ծրեռքավրս փիչատ ըմ տիրալ, թող էտ փիչատին յրան էտ տրղին ճրնանչին, պըերին։ Իտի էլ անըմ ըն։

Տրղին ճարըմ ըն, պըերըմ թաքավերին կոշտը։ Թաքավերն ասըմ ա. — Ա՛ ղոչչաղ տրղա, քու էտ վարմունքիտ հետի հի՞նչ ըս օղըմ քյրեզ տամ։

Ասըմ ա. — Թաքավերը ապրած կրենա, վրեշ մին պեն օղըմ չըմ։

Թաքավերն ասըմ ա. — Չէ՛, վրեր չէ՛, քու ըրած լրվոթունըտ մրտաս քրցիլ չըմ, ամմա բիդի ասիս, թա հինչ ըս օղըմ։ Օղըմ ը՞ս

ախճիգյս քյըեզ տամ, օղըմ ը՛ս թաքավերութունիս կեսը քյըեզ տամ, հի՞նչ վըեր օզըմ ըս, տամ։

էտ տըղան ասըմ ա. — Թաքավերն ապրած կըենա, յըես օրիշ նպատակ օնիմ, յըես էտ նպատակին հետան ըմ քյընըմ, յըես կարիլ չըմ էս մըթեն աշխարքըմըս կըենամ, թա օզըմ ըս ինձ լըվոթուն անիս, մին թա̈հր ըրա, էս մըթեն աշխարքան տո̈ւս կյամ, ընգնիմ լո̈ւս աշխարքը։

Թաքավերն ասըմ ա. — Տա շատ տըժեր պըեն ա, տա իմ օժաս վըեր պըեն ա, տա վըեչ յըես, վըեչ էլ իմ երգյիրիս իմաստունին գյիդա̈լ չըն, մինա̈կ էտ պըենին թա̈հրը կըգյիդա̈ Ջո̈ւմրո̈ւտ ղուշը։ էն էլ էն ա օխտը սարի քըմակի, օխտը ծո̈րի քըմակի, մին ղալին, մըեծ ծըմակըմ, թա վըեր կըրեցիր ճարիս, էնա լա̈վ կինի, քյըեզ էլ, վըեր պըեն պըեթկը կյա, կըկյաս ինձանա օղիս։

Թաքավերին պուճուր տըղան շումրակալ ա ընում, քյընըմ։

Քյընըմ ա, քյընըմ, օխտը սարի, օխտը ծո̈րի քըմակի մին ղալին, մըեծ ծըմակըմ, մին մըեծ ծառի տակի, վըեր ճըղները մինչև երգյինք ա հըսնըմ, տիրանին էլ թողըմ չի թա տակը մին պատառ լո̈ւս ընգնի, թեքյ ընգնըմ, թա մին խըրեզյ դինջա̈նա̈։ Մին էլ ա տըեսնըմ մին մըեծ, շահմար օձը, մին աժդահա, մին սարի չաք, էս ա յըեկավ, էտ ծառավը պըցրա̈ցավ թա Ջո̈ւմրո̈ւտ ղուշին ճոտերը կուլ տա։ էտ տըղան յըեր ա թըռչըմ, էտ ճըտերին ծըվծըվոցան սա̈րսա̈րի իլա̈ծ, թորավը մին հենց թըխըմ էտ օձեն, վըեր օձը ծառան դա̈ստի եր ա ընգնըմ, ըստակըմ։ էտ տըղան էտ օձեն լըեշը կտոր-կտոր ա անըմ, ծառին կոխկին կյո̈ւտ տամ, ինքը էլհա քյընըմ թեքյ ընդնըմ, քոն ինըմ։

Ջո̈ւմրո̈ւտ ղուշը քյնա̈ցա̈լ ար ո̈ւրա̈ն ճըտերին հետի կոտ ճարի, օտելի պըեն ճարի, պըերի։ Վըեր կյամ ա տըեսնըմ ընդըեղերք լոխ արո̈ւն, պո̈ւնը ա̈ռնոտ, գյուդըում ա, թա էտ ծառին տակին քոն իլա̈ծ տըղան ա ո̈ւրա̈ն թըշնամին, գյուդո̈ւմ ա, թա էտ տըղան ա ամմեն տարի կյամ ո̈ւրա̈ն ճոտերը կուլ տամ։ Ջո̈ւմրո̈ւտ ղուշը օզըմ ա էտ տըղին կուտուցավը պըտըռ-պատառ անի, ճոտերը ըսկըսըմ ըն ծըվծըվալ, ճըղճըղալ, մորը հըսկըցնըմ ըն, վըեր վեչ թա էտ տըղան ա ո̈ւրա̈նց դո̈ւշմա̈նը, ո̈ւրա̈նց դո̈ւշմա̈նը էն շահմար օձըն ա, վըեր յըեկալ ա, թա ո̈ւրա̈նց կուլ տա, էտ տըղան թըխալ ա, ըսպանալ։

էն վախտը Ջո̈ւմրո̈ւտ ղուշը ուրխանըմ ա, վըեր ազադվալ ա էտ աժդահա օձծան, վըեր ամմեն տարի կյամ ա իլա̈լ, ո̈ւրա̈ն ճոտերը կուլ տամ, աշկը թողըմ կոնյա լհա̈ մին ճըտի յըրա։

Զումրուտ դուշը պրեց ա անում ուրան թևերը, էտ տղին հով անում, վրեր քախծը քոն ինի։ Վրեր էտ տղան զուրթնանում ա, եր կենում, Զումրուտ դուշն ասում ա. — Ա՛յ տղա, տու վրեր իմ ճոտերրս ազատեցիր էն ածդահա օխծան, վրեր տու իմ դուշմանիս ըստի կտոր-կտոր ըրիր, հի՞նչ ըս օղում — քյրեզ տամ։

Տղան ասում ա. — Վրեշ մին պրեն լում օղում, լհա թաքյ ինձ լուս աշխարք տուս պրերիս։

Զումրուտ դուշը ասում ա.— էս իմ աշկիս լրան, լրես քյրեզ լուս աշխարք տուս կօնիմ, մինակ տու բիդի իմ մին թևիս օխտը վեչխարի տրմակ տինիս, էն մին թևիս էլ օխտը տեգյ ճուր, ամմեն մին կրոնչելավրս բիդի մին տրեգյ ճուր, մին վեչխարի տրմակ քրցիս պրերանրս։

Թաքավերին պուճուր տղան խոսկ ա տում, վրեր էտ լոխ կրճարի պրերի։ Տա քյրնում ա սրեվ աշխարքին թաքավերան օղում, լոխ պրերում ըտրեղ, Զումրուտ դուշին մին թևին օխտը տեգյ ճուր ա տրնում, էն մին թևին էլ օխտը վեչխարի տրմակ, ինքն էլ մրեշ տրեղը նըստում, Զումրուտ դուշը յոր օնում, թրուչում բիդի լուս աշխարքը։ Թրուչում ա, թրուչում, սուվրծացած տրեղը կրոնչում։ էտ վրեր կրոնչում ա, էտ տղան մին վրեչխարի տրմակ, մին տրեգյ ճուր ա քրցում պերանը։ Իտի վեց հետ կրոնչում ա։ Խրեգյ ար մընացալ, վրեր լուս աշխարքը տուս կյան, վրեր օխտինշի դոնրմը կրոնչում ա, մին էլ ա տրեսնում, վրեր օխտինշի տրմակը ծրերքան եր ա ընգնում։ էտ տղան ճարը կրտրած տենակը հանում ա, ուրան բուդան մին կրտորը կրտրում, քրցում դուշին պրերանը։ Զումրուտ դուշը դաստի գյուդում ա, էտ բուդին կտորը կոլ չի տամ, լուզվին տակին պահում ա։

Վրեր լուս աշխարք ըն տուս կյամ, Զումրուտ դուշն ասում ա. — Դե քյինի, մին տրեսնամ հունց ըս քյրնում։ էտ տղան կրղլրգյի տալավ ա քյրնում։

Զումրուտ դուշն ասում ա. — Ինքյ առ բուդիտ մրեսը, լրես կոլ չըմ տրվալ, լուզվիս տակին պահալ ըմ։ էս թրեփուտրն էլ եր կալ, մրեսը տիր բուդիտ յրան, թեփուռավրս քրսի, լավանալու յա։ Ասում ա պրրծրնում, ինքը հետ թրուչում։

Թաքավերին պուճուր տղան իտի էլ անում ա։ Ցարան լրվանում ա, էլ կրղլրգյի չի տամ։

Տա ըտղան ճանապարվում ա բիդի ուրանց պալատը, բիդի ուրան հայրենիքը։ Տա օղից վրեչ բուրդան ուրանց տոն քյինի։

Ասից հալա՛ մին պատառ կենամ, տրեսնամ հի՞նչ կա, հի՞նչ չիկա մրեր քըղաքըմր։

Ըտրա հետի նա շորերը փոխից, քյինից մին զարդյարի քըշտի շագյերդ նի մրտավ։ Մին օր էտ ուստան ըտրան ասըմ ա. — Պա գյուդում ըս հինչ կա, էս քանի օրըս թաքավերին մրեծ տըղան օգըմ ա փըսակվե ուրանց սըերած էն լոխճան կյեղեցիկ ըխճըկանը նհետ։ Մըհենգյ էն ախճիգյը օղըմ չի, ասըմ ա, թա. «Ինձ հըետի մին վըեսկե շոն, մին էլ մին կատու շինիլ տա, ամմա վըեր ուրուր նըհետ կըոըեվ չանին, էն վախտը յըես քյըեղ կըկյամ»։ Էտ մին շատ տըժեր կործ ա, էն էլ ինձ ըն տըվալ, վըեր անիմ, մըհենգյ մընացալ ըմ մաթալ։ Գյուդում չըմ, թա հինչ անիմ, վըեր էտ ղաղաբան պըրծընիմ։

Թաքավերին պուճուր տըղան տըեսավ, վըեր ուրան ուստան շատ ա մըտածըմ, մըետը քըցից ուրան սիրած ըխճըկանը մըտանին, ընդրա ղորութունը։ Ասից. — Ա՛յ ուստա, քընենքյ, մանիլ, քյինի ինձ հետի մին փութ տըկողին առ պըեր, յըես էս քըշեր կըշինիմ...

Ուստան հալա հըվատըմ չի, ամմա մըթկըմը ասըմ ա.— Մին փութ տըկողինը հի՞նչ ա, առնիմ տամ ուրան, տրեսնամ հի՞նչ ա անըմ։

Քըշերը էտ տըղան տըկողին օտելավ շինըմ ա։ Քըշերավ ուստան կյամ ա տրեսնըմ պադրաստ, յոր օնըմ, տանըմ պալատը, տամ ուրանց։

Էտ իրեք ըխճըկորցան լոխճան պուճուրը, էն լունսի պատառ ախճիգյը, դաստի գյուդում ա, վըեր էտ թաքավերին պուճուր տըղին պըեննա։

Հըրսանիքյը ըսկըսվըմ ա։ Թաքավերին պուճուր տըղան ուրան ուստան թաքուն սըեվ շորեր ա կյինըմ, սըեվ ծի նըստըմ, քյընըմ հըրսանիքյը խընգարըմ։

Մին քանի օրանը ետը ուստան էլհա ըեքյեի կյամ ա, ասըմ.

— Պա ասիլ չը՞ս, մըհենգյ էլ թաքավերը օղըմ ա էտ լունսի պատառ ըխճըկանը ուրան մաշնակ տըղին նըհետ փըսակի, ամմա ախճիգյը օղըմ չի, ասըմ ա. — «Ինձ հետի մին վըեսկե կատու, մին վըեսկե մոկըն շինիլ տա, վըեր ուրուր նըհետ խաղ անին, ամմա կատուն մոկնը օտի վըեշ»։

Թաքավերին տըղան ասըմ ա. — Ո՛ւստա, քընենքյ մի անիլ, էս քըշեր յըես կշինիմ, մինակ ինձ հետի մին փութ շըմբալութ առ, վըեր օտիմ։

Ուստան քյընըմ ա բըզարան մին փութ շըմբալութ առնըմ, պըերում ո̈ւրա̈ն տամ, քյընըմ տուն։

Էտ քըշեր ուստան նան ո̈ւրա̈ն կընէգյը կյամ ըն դո̈ւքյա̈նին տըռնին ծական թաքուն եշըմ, տըեսնան, հի՞նչ ա անելու էտ շա̈գյերդը։ Ըտրանք կարըմ չըն մին պըեն տըեսնան, ըտըեղ էլ քունավ ըն ընցնըմ։

Քըշերավ ուստան զա̈րթնըմ ա, տո̈ռնը պըեց անըմ, տըեսնըմ վըեսկե կատուն նան մոկնը էնա պաղրաստ։ Ուստան մընըմ ա մաթ մընացած, ամմա պըեն չի ասըմ, լհա̈ յոր ա օնըմ, տանըմ թաքավերին պալատը։

Էտ լո̈ւսի պատառ ախճիգյը էլհա գյուղո̈ւմ ա, թա էտ հո̈ւր ծըեռքի հունա̈ր ա՞

Ուրո̈ւգյունը թաքավերին պուճուր տըղան ուստին անա թաքուն կյարմուր շո̈րեր ա կյենըմ, կյարմուր ծի նըստըմ, քյընըմ պալատը, էլհա հըրսանիքյը խանգարըմ։

Էքյսը թաքավերը հըրամմայըմ ա, վըեր էտ հըրսանիքյը խանգարող տըղին ճարին։ Ման ըն կյամ, ման, կարըմ չըն ճարին։

Թաքավերին պուճուր տըղան գյիդա̈լա̈վ վըեր իտի յա, սիպտա̈կ շո̈րեր ա կյենըմ, ուստին անա թաքուն, սիպտա̈կ ծի նըստըմ, քյընըմ պալատը, թուշ ո̈ւրա̈ն հորը կոշտը, լոխ հորը նաղլ անըմ։

Հա̈րը ըտըեղ ուրխանըմ ա, վըեր տըեսնըմ ա տըղան սաղ-սալամաթ յըեկալ ա, վըեր հունցը ասալ ին, գո̈վը կուլ չի տըվալ։

Թաքավերը իրավունք ա տամ էտ պուճուր տըղին, վըեր հինչ օզըմ ա անի, վըեր ո̈ւրա̈ն էտ փիս, նախանձկոտ ախպորցը հինչ պատիժ օզըմ ա, տա։

Թաքավերին պուճուր տըղան օզըմ ա ախպորցը ըսպանի, մին էլ սաղ ա թողըմ, հըրամմայըմ ա, վըեր ախպերքը ո̈ւրա̈նց էն էրկու կյեղեցիկ կընանոցը յոր օնին, ըշտըեղ քյընըմ ըն, քյինին։

Ախպերքը տըխուր, աշկըունքան աղու կաթըմ, յոր ըն օնըմ ամեգյը ո̈ւրա̈նց կընանեքյը, մըեծ ախպերը մըեծ ախճիգյը, միջնա̈կը՝ միջնակ ախճիգյը, քյընըմ, հըռանըմ ո̈ւրա̈նց երգյիրան։

Թաքավերը ո̈ւրա̈ն թախտան եր ա կյամ, ո̈ւրա̈ն պուճուր տըղին թախտին նստըցընըմ, ասըմ. — Մըհենգյանց տենը տու կինիս թաքավերը, յըես էս ա պըռավալ ըմ։

Պըերըմ ա տըղին մին էլ էն լո̈ւսի պատառ ըխճըկանը ո̈ւրո̈ւր նըհետ փըսակըմ, օխտը օր, օխտը քըշեր հըրսանիքյ ըն անըմ, սաղ ժողովուրթին կանչըմ, ուտըցընըմ, խըմըցընըմ, կըլխըներին վըեսկե շաղ տամ։ Իտի էլ թաքավերին պուճուր տըղան թաքավեր ա տըեռ-

նրմ, էն լուսի պատառ ախմիգլըն էլ թաքուհի։ Մին տրեղ մինչև ուրանց էրգյան դյանքին վրերչը ապրըմ ըն սիրավ, լավ, ժողովուրթին էլ շատ ըն սիրըմ։

Ըտրանք հասին ուրանց մուրազին, տուք էլ հասնիք ծեր մուրաղին։ Սրգյինքան իրեք վրեսկե խընձոր եր ընգավ. մինը՝ ըսողին, մինը՝ կյրողին, մինն էլ՝ էս հաբյաթը լուս աշխարք հանողին։